

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

#### Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական (էկոլոգիական) կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքներին, այլ օրենքներին, սույն կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
2. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):
3. Կազմակերպության կանոնադրությունը դրա հիմնադիր փաստաթուղթն է:
4. Կազմակերպությունը «Արփի լիճ» ազգային պարկի (այսուհետ՝ պարկ) տարածքում ապահովում է պարկի կանոնադրությամբ ամրագրված պահանջների կատարումը:
5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն, ռուսերեն ու անգլերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք և կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Կազմակերպության անվանումն է՝
  - 1) հայերեն լրիվ՝ «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.
  - 2) հայերեն կրճատ՝ «Արփի լիճ» ԱՊ» ՊՈԱԿ.
  - 3) ռուսերեն լրիվ՝ Государственная некоммерческая организация «Национальный парк «Озеро Арпи».
  - 4) ռուսերեն կրճատ՝ ГНКО «НП «Озеро Арпи».
  - 5) անգլերեն լրիվ՝ «Lake Arpi» National Park State Non-Commercial Organization.
  - 6) անգլերեն կրճատ՝ «Lake Arpi» NP SNCO:
7. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Բերդաշեն:

**II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ,  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

8. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, բնության տարեգրության վարման, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:
9. Կազմակերպության գործառույթներն են՝
  - 1) ապահովում է ազգային պարկի ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենֆոնդի, բնության և մշակութային ժառանգության պահպանությունը, կազմակերպում և աջակցում է դրանց գիտական ուսումնասիրությունը.
  - 2) կազմակերպում և մասնակցում է բնական էկոհամակարգերի ու դրանց առանձին բաղադրիչների, բուսական և կենդանական աշխարհի հաշվառմանն ու նախապատրաստում է կադաստրի վարման համար անհրաժեշտ նյութերը.
  - 3) իրականացնում է էկոլոգիական մոնիթորինգ, վարում բնության տարեգրությունը և աջակցում Հայաստանի բնության պետական թանգարանի գործունեությանը, որտեղ պահպանվում ու ցուցադրվում են ազգային պարկի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի էկոհամակարգերի ու դրանց տարրերի վերաբերյալ ցուցանմուշներ, հավաքածուներ և տեղեկատվություն.
  - 4) ապահովում է ճանաչողական զբոսաշրջության և ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական միջոցառումների (դպրոցականների ճանաչողական էքսկուրսիաներ), ուսումնասիրտադրական պրակտիկաների անցկացումը.
  - 5) կանխարգելում է մարդու գործունեության հետևանքով պարկի բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացները և իրականացնում խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումներ.
  - 6) սահմանված կարգով իրականացնում է հրդեհային անվտանգության միջոցառումներ.
  - 7) ապահովում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից պարկի կանոնադրությամբ սահմանված դրույթների կատարումը.
  - 8) իրականացնում է բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներ.
  - 9) նպաստում է ճանաչողական զբոսաշրջության և դրա հետ կապված սպասարկման ծառայությունների կազմակերպմանը.
  - 10) անդամակցում է միջազգային բնապահպանական կազմակերպություններին, մասնակցում միջազգային բնապահպանական ծրագրերին.
  - 11) պատրաստում ու հրատարակում է գիտական և գիտաճանաչողական գրականություն ու տեղեկատվական նյութեր.
  - 12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
10. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- 1) կենսառեսուրսների, այդ թվում՝ բույսերի ու կենդանիների տեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրություն, օգտագործում և իրացում.
  - 2) ճանաչողական զբոսաշրջության կազմակերպում.
  - 3) կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում.
  - 4) գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և իրացում.
  - 5) հանգստի և ճանաչողական զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում.
  - 6) «Արփի լիճ» ազգային պարկին վերաբերող գովազդի կազմակերպում.
  - 7) գիտական, գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում:
11. Կազմակերպության գործունեության առարկան ընդգրկում է՝
- 1) արգելոցային և արգելավայրային գոտիների տարածքներում՝ էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրումն ու հաշվառումը, մոնիթորինգի, հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական միջոցառումների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպումն ու իրականացումը, ճանաչողական զբոսաշրջության հետ կապված վճարովի ծառայությունների մատուցումը.
  - 2) ռեկրեացիոն գոտու տարածքում՝ էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրումն ու հաշվառումը, մոնիթորինգի, հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական միջոցառումների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպումն ու իրականացումը, զբոսաշրջության, ճանաչողական զբոսաշրջության և քաղաքացիների հանգստի հետ կապված վճարովի ծառայությունների մատուցումը (քաղաքացիների երկարատև և կարճատև հանգստի, վրանային և ոչ հիմնական շինություն հանդիսացող տնակային տնտեսությունների, սիրողական ձկնորսության կազմակերպում), տարածքների, շենքերի, շինությունների և շարժական գույքի վարձույթով ժամանակավոր օգտագործման տրամադրումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տարածքների կառուցապատման թույլտվությունը, սանիտարական և խնամքի ծառահատումների իրականացման արդյունքում ստացվող փայտանյութի մթերումն ու իրացումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան այլ կենսապաշարների մթերումը, դրանց և դրանցից պատրաստված արտադրանքի (պահածոներ, հյութեր և այլն) իրացումը, տրասնպորտային միջոցների մուտքի և կանգառի նպատակով հատուկ առանձնացված և կահավորված վայրերում տրանսպորտային միջոցների կանգառի (պահպանության) գծով վճարովի ծառայությունների մատուցումը.
  - 3) տնտեսական գոտու տարածքում՝ էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների գույքագրումն ու հաշվառումը, մոնիթորինգի, հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական միջոցառումների և բարձրագույն

ուսումնական հաստատությունների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպումն ու իրականացումը, պարկի արգելոցային, արգելավայրային և ռեկրեացիոն գոտիներին անհրաժեշտ ենթակառուցվածքների տեղադրումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տարածքների, շենքերի, շինությունների և շարժական գույքի վարձույթով ժամանակավոր օգտագործման տրամադրումը, տարածքների կառուցապատման թույլտվությունը, տարածքին բնորոշ հազվագյուտ և արժեքավոր վայրի բույսերի և կենդանիների վերարտադրությունը, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման կազմակերպումն ու իրացումը, սանիտարական և խնամքի ծառահատումների իրականացման արդյունքում ստացվող փայտանյութի մթերումն ու իրացումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան այլ կենսապաշարների մթերումը, դրանց և դրանցից պատրաստված արտադրանքի (պահածոներ, հյութեր և այլն) իրացումը, հուշանվերների արտադրությունը և ցուցահանդես-վաճառքների կազմակերպումը:

12. Կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

### **III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

13. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, դրա լիազորված պետական մարմինը, կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) և գործադիր մարմինը՝ տնօրենը:
14. Կազմակերպության հիմնադիրն ունի դրա գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնականապես լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
15. Հիմնադրի լիազորությունները սահմանվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով:
16. Պետական լիազորված մարմնի լիազորություններն են՝
  - 1) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.
  - 2) կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների սահմանված կարգով ստեղծումը.
  - 3) կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.
  - 4) կազմակերպության կառավարման (այդ թվում՝ կոլեգիալ) մարմինների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
  - 5) կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը.
  - 6) կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների ու ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը.
  - 7) խորհրդի կողմից հավանության արժանացած կազմակերպության հաստիքային ցուցակի և տարեկան ծախսերի նախահաշվի հաստատումը.

- 8) կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները լսելը և դրա գործունեության վերստուգման արդյունքները քննարկելը.
  - 9) կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը.
  - 10) կազմակերպության տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.
  - 11) կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
  - 12) կազմակերպության տնօրենի պաշտոնի համար կազմակերպվող մրցույթի կարգի հաստատումը.
  - 13) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործառույթների իրականացումը:
17. Խորհուրդը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կառավարում է կազմակերպության գործունեությունը: Խորհուրդը կազմված է հինգ անդամից, ներառյալ նախագահը, և քարտուղարից: Խորհրդի կազմում ընդգրկվում են Գիտությունների ազգային ակադեմիայի և կազմակերպության մեկական անդամ: Կազմակերպության անդամն ընտրվում է կազմակերպության ընդհանուր ժողովում, որին մասնակցել է աշխատանքային կոլեկտիվի առնվազն 80 տոկոսը: Կազմակերպության աշխատակիցը համարվում է ընտրված խորհրդի անդամ, եթե մեկից ավելի թեկնածուների դեպքում ստացել է քվեարկությանը մասնակցած աշխատակիցների ձայների առավելագույն քանակը, իսկ մեկ թեկնածուի դեպքում՝ քվեարկությանը մասնակցած աշխատակիցների ձայների կեսից ավելին: Գիտությունների ազգային ակադեմիան գրավոր առաջադրում է խորհրդի անդամի իր թեկնածուին: Խորհրդի քարտուղարը նշանակվում է կազմակերպության աշխատակիցներից: Խորհրդի անդամներին և քարտուղարին նշանակում և անհատական կազմը հաստատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը:
18. Խորհրդի լիազորություններն են՝
- 1) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված՝ կազմակերպության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ լիազորված պետական կառավարման մարմին առաջարկություններ ներկայացնելը
  - 2) կազմակերպության գործադիր մարմնի նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացումը.
  - 3) տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ պետական լիազորված մարմնին առաջարկություն ներկայացնելը.
  - 4) հիմնադրի կողմից սահմանված կարգով կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը.
  - 5) կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
  - 6) իր աշխատակարգի հաստատումը.

- 7) սահմանված կարգով լիազորված պետական մարմին կազմակերպության հաստիքային ցուցակի և տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ հավանություն տալը.
  - 8) կազմակերպության ստորաբաժանումների կանոնակարգերի, ներքին կարգապահական և այլ կանոնների հաստատումը.
  - 9) կազմակերպության գործադիր մարմնի հաշվետվությունների քննարկումը և հաստատումը.
  - 10) կազմակերպության տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունների քննարկումը.
  - 11) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համար համաձայնություն տալը.
  - 12) ազգային պարկի հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի և հողամասի նկատմամբ կնքվող այլ պայմանագրերին ու դրանցում կատարվող պայմանագրային պայմանների էական (մակերես կամ վարձավճար կամ ժամկետ) փոփոխություններին համաձայնություն տալը և կազմակերպության կողմից վարձակալության կամ օգտագործման իրավունքով հանձնվող գույքի, այդ թվում՝ հողամասի նվազագույն վարձավճարների, ինչպես նաև հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց նվազագույն վճարների չափերի հաստատումը.
  - 13) կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների մատուցման կարգի ու վճարների չափերի հաստատումը.
  - 14) կազմակերպության կողմից վարձակալության կամ օգտագործման իրավունքով հանձնվող գույքի, այդ թվում՝ հողամասի վարձավճարների և հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց վճարների մեկնարկային նվազագույն չափերի, ինչպես նաև կնքված և իրավունքների պետական գրանցում ստացած պայմանագրերով սահմանված վճարների չափերի նվազեցումների հաստատումը.
  - 15) քաղաքացիների ու իրավաբանական անձանց կողմից իրեն ուղղված դիմումների, առաջարկությունների կամ բողոքների քննարկումը.
  - 16) խորհրդի որոշումների կատարման, կազմակերպության գույքի պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
  - 17) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:
19. Խորհրդի անդամներն իրենց լիազորությունների շրջանակներում իրավունք ունեն՝
- 1) տնօրենից պահանջելու տվյալներ, հաշվետվություններ, փաստաթղթեր, տեղեկություններ.
  - 2) պահպանվող տարածքների կանոնադրությունների ռեժիմներին համապատասխան՝ ազատ մուտք գործելու կազմակերպության կամ ազգային պարկի տարածք կամ առանձնացված ստորաբաժանում.
  - 3) հանդիպելու կազմակերպության աշխատողների, ինչպես նաև կազմակերպության հետ պայմանագրային հարաբերություններ ունեցող ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ.

- 4) ներկա գտնվելու կազմակերպության ծրագրերի իրականացման, ինչպես նաև պահպանական ու հսկողական աշխատանքներին.
  - 5) տնօրենից և աշխատողներից պահանջելու պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ինչպես նաև սույն կանոնադրության, լիազորված պետական մարմնի, խորհրդի և տնօրենի կողմից սահմանված կարգերի, կանոնների ու այլ պարտադիր նորմերի պահանջները.
  - 6) հարց բարձրացնելու խորհրդում՝ տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին, ինչպես նաև տնօրենի առջև՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, լիազորված պետական մարմնի, խորհրդի ու տնօրենի կողմից սահմանված կարգերի, կանոնների և այլ պարտադիր նորմերի պահանջները խախտած աշխատողներին պատասխանատվության ենթարկելու մասին.
  - 7) իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող, խորհրդի իրավասությանն առնչվող կամ խորհրդի կողմից սահմանված վերահսկողական կամ այլ գործառույթներ:
20. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են լիազորված պետական մարմնի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտով՝
- 1) լիազորված պետական մարմնի ղեկավարի որոշմամբ,
  - 2) խորհրդի առաջարկությամբ.
  - 3) անձնական դիմումով,
  - 4) խորհրդի նիստերին անընդմեջ երեք անգամ անհարգելի չմասնակցելու դեպքում,
  - 5) կազմակերպության ներկայացուցչի դեպքում՝ կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ:
21. Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում մինչև առաջիկա խորհրդի նիստը նշանակվում է նոր անդամ:
22. Խորհրդի նախագահը՝
- 1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.
  - 2) նախագահում է խորհրդի նիստերը.
  - 3) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը և վավերացումը.
  - 4) խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում համակարգում է կազմակերպության գործադիր մարմնի և խորհրդի անդամների կապերը.
  - 5) որոշում է խորհրդի նիստերի անցկացման կարգը կամ ձևը:
23. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, գործադիր մարմնի կամ խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով: Խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով:
24. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:
25. Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում, խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

26. Խորհրդի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել խորհրդի նիստին ներկա անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է: Խորհրդի քարտուղարը ձայնի իրավունք չունի:
27. Խորհրդի, այդ թվում հարցման կարգով կամ հեռավար կազմակերպված, նիստերն արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից: Խորհրդի նիստի արձանագրության պատճենը խորհրդի քարտուղարը ներկայացնում է լիազոր մարմին:
28. Անհրաժեշտության դեպքում՝ խորհրդի նիստերը կարող են կազմակերպվել հարցման կարգով՝ գրավոր փաստաթղթերի փոխանցմամբ, կամ հեռավար՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ: Եթե խորհրդի արձանագրության նախագիծը խորհրդի անդամին պատշաճ ուղարկվելուց կամ փոխանցվելուց հետո եռօրյա ժամկետում խորհրդի անդամի կողմից պատասխան չի տրվում, ապա համարվում է, որ խորհրդի անդամը կողմ է արձանագրության նախագծին:
29. Խորհրդի նիստերին, խորհրդի անդամների նախաձեռնությամբ, կարող են մասնակցել հրավիրված այլ անձիք:
30. Տնօրենն իրավունք չունի հանդես գալ որպես կազմակերպության խորհրդի անդամ, սակայն կարող է մասնակցել խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:
31. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:
32. Կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի ու լիազորված մարմնի, ինչպես նաև խորհրդի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի խորհրդի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
33. Կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակվում է մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուին կամ թեկնածուներից մեկին՝ լիազորված պետական մարմնի ղեկավարի կողմից:
34. Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարեցման՝ օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
35. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
36. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Տնօրենի



պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար: Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից կազմակերպությանը կամ պետությանը պատճառած վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի համար կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցրած պաշտոնատար անձը կրում է գույքային պատասխանատվություն:

37. Տնօրենի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
38. Տնօրենի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում, այդ լիազորություններն իրականացնում է տնօրենի տեղակալը, եթե այլ բան չի սահմանում լիազորված պետական մարմնի ղեկավարը:
39. Տնօրենի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են՝ օրենքով սահմանված դեպքերում:
40. Տնօրենի տեղակալը և մասնաճյուղի տնօրենը կամ ղեկավարը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է կազմակերպության տնօրենի կողմից՝ լիազորված պետական մարմնի ղեկավարի համաձայնությամբ:
41. Տնօրենը՝
  - 1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում դրա շահերը և կնքում գործարքներ.
  - 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
  - 3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
  - 4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր.
  - 5) ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացում է հաշվարկային հաշիվներ.
  - 6) կատարում է աշխատանքի բաշխում իր և տեղակալի միջև.
  - 7) սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
  - 8) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

- 9) ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված պետական մարմին.
  - 10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկում է միջոցներ՝ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից պահպանող տարածքների ռեժիմների խախտման հետևանքով բնությանը պատճառված վնասը հատուցելու համար.
  - 11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմինների չվերապահված այլ լիազորություններ.
  - 12) հաստատում է հիմնարկների կամ մասնաճյուղերի կանոնադրությունները:
42. Կազմակերպության վարչական և սպասարկող աշխատակազմի թվաքանակը չի կարող գերազանցել ընդհանուր հաստիքների թվի 25 տոկոսը:

#### **IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

43. Պարկի պահպանությունն իրականացվում է կազմակերպության պահպանության բաժնի և տեղամասային տեսուչների (այսուհետ՝ պահպանության ծառայության աշխատողներ) միջոցով:
44. Պահպանության ծառայության աշխատողները՝
  - 1) ապահովում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, պարկի և սույն կանոնադրություններով, ինչպես նաև պարկի արգելոցային, ռեկրեացիոն ու տնտեսական գոտիների կանոնակարգերով սահմանված բնապահպանական նորմերի և կանոնների կատարումը պարկի տարածքում.
  - 2) ստուգում են պարկի արգելոցային տարածքներ մուտք գործող անձանց անցագրերը.
  - 3) կանխում են պարկի ռեժիմները խախտող ցանկացած գործողություն.
  - 4) կազմում են արգելոցային գոտիների ռեժիմների խախտումների մասին արձանագրություններ, դրանք ներկայացնում տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ընթացք տալու համար.
  - 5) իրավախախտողի անձը խախտման վայրում պարզելու անհնարինության դեպքում կարող են նրան բերել ոստիկանության մոտակա բաժին.
  - 6) օրենքով սահմանված դեպքերում վերցնում և պատկան մարմիններին են հանձնում պարկի պահպանության ռեժիմները խախտող անձանց իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերն ու փաստաթղթերը.
  - 7) պահպանության ռեժիմը խախտող անձի բացակայության դեպքում վերցնում և պատկան մարմիններին են հանձնում իրավախախտման գործիքները կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերը.
  - 8) ապահովում են պարկի տարածքներում ֆիզիկական անձանց ու կազմակերպությունների կողմից սույն կանոնդրությամբ սահմանված պահանջների կատարումը:

45. Պահպանության ծառայության աշխատողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի կրելու համազգեստ և օգտագործելու քաղաքացիական ու ծառայողական զենք:
46. Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ պահպանության ծառայության աշխատողների առողջությանը և գույքին պատճառված վնասի հատուցումը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

## **V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՈՒՄԸ**

47. Կազմակերպության կողմից իրականացվող գիտական հետազոտությունները, մոնիթորինգը և կադաստրի վարումն ուղղված են պարկի տարածքի բնական էկոհամակարգերի ուսումնասիրմանը, բնական երևույթների և էկոլոգիական իրավիճակի կանխատեսմանն ու գնահատմանը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանը, ինչպես նաև բնական պաշարների արդյունավետ օգտագործման և բնության պահպանության գիտական հիմունքների մշակմանը:
48. Գիտահետազոտական աշխատանքները, մոնիթորինգը և կադաստրի վարումը կազմակերպում է կազմակերպության գիտության բաժինը:
49. Գիտահետազոտական աշխատանքները՝
- 1) իրականացվում են կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև ազգային ու միջազգային դոնոր կազմակերպությունների, կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեությունից առաջացած միջոցների և օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին.
  - 2) լիազորված պետական մարմնի համաձայնությամբ, պայմանագրային հիմունքներով կարող են իրականացվել այլ կազմակերպությունների և մասնագետների կողմից.
  - 3) նպատակաուղղված են պարկի էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության և օգտագործման ձևերի ու մեթոդների մշակմանը, հազվագյուտ և անհետացող տեսակների վերարտադրությանը, գիտական և գիտաճանաչողական նյութերի պատրաստմանն ու հրատարակմանը:
50. Մոնիթորինգը՝
- 1) կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեությունից առաջացած միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին.
  - 2) նպատակաուղղված է կենսաբանական բազմազանության տարածվածության, տեսակային կազմի, քանակի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիայի ուղիների առկա վիճակի բացահայտմանը, ինվազիվ՝ օտարածին (ներմուծված) տեսակների տարածվածության ուսումնասիրությանը, էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների քանակական և որակական փոփոխությունների գնահատմանն ու կանխատեսմանը, բնական և մարդածին գործոնների ազդեցության բացահայտմանը.
  - 3) իրականացվում է ելակետային տվյալների ստացման և հավաքագրման նպատակով ստեղծված դիտարկման ցանցում, որը ներառում է մշտական կամ ժամանակավոր

(սեզոնային) դիտակետեր, փորձահրապարակներ, երթուղիներ: Դիտարկման ցանցի տեղաբաշխման նախագիծը մշակում է կազմակերպությունը և ներկայացնում լիազորված պետական մարմնի հաստատմանը:

51. Կադաստրի վարումը՝

- 1) կազմակերպվում և իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեությունից առաջացած միջոցների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին.
- 2) նպատակաուղղված է գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացման ընթացքում ստացված տվյալների հավաքագրմանն ու դասակարգմանը, տարածքների և բնական պաշարների օգտագործման հաշվառմանը, ամփոփմանը և վերլուծմանը, տարածքների օգտագործման օպտիմալ ծանրաբեռնվածության բացահայտմանը.
- 3) իրականացվում է գիտական ուսումնասիրությունների, մոնիթորինգի իրականացման արդյունքում ստացված տվյալների, տարածքների օգտագործման պայմանագրերի, վճարովի ծառայությունների մատուցման մասին տվյալների հիման վրա՝ տվյալները գրանցելով գրանցամատյանում և համակարգչային տվյալների շտեմարաններում:

## **VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՊԱՐԿԻ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

52. Կազմակերպությունն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում (տիրապետում) է իրեն ամրացված գույքը:
53. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներից և կազմակերպության կողմից ձեռնարկատիրական գործունեությունից, միջոցառումների իրականացման, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:
54. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է կազմակերպության կանոնադրական նպատակներին համապատասխան:
55. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված ուսումնասիրատարական պրակտիկաների անցկացման համար արգելոցային գոտիներ մուտքի վճարը սահմանվում է կազմակերպության և համապատասխան ուսումնական հաստատության միջև ստորագրված պայմանագրով:
56. Ազգային պարկի արգելոցային գոտիների տարածքներ մուտք գործելու համար՝
  - 1) իրավաբանական անձինք նախապես դիմում են ներկայացնում կազմակերպությանը՝ մուտքի անցագիր ձեռք բերելու համար, որում պետք է ներառվեն տեղեկություններ տարածք մուտք գործելու նպատակի, ժամանակի և մուտք գործող անձանց թվի վերաբերյալ.
  - 2) զբոսաշրջային կազմակերպությունները նախապես կարող են կնքել պայմանագրեր՝ զբոսաշրջությունը կազմակերպելու համար.

- 3) ֆիզիկական անձինք տարածք մուտք կարող են գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարը մուծելուց և կազմակերպության կողմից անցագիր ստանալուց հետո.
  - 4) սահմանված մուտքավճարներն իրավաբանական անձինք նախապես մուծում են կազմակերպության բանկային հաշվեհամարին, իսկ ֆիզիկական անձինք՝ ինչպես բանկային հաշվեհամարին, այնպես էլ արգելոցի անցակետերում:
57. Ազգային պարկի արգելոցային գոտիների տարածքներ մուտք գործելու թույլտվություն չի տրամադրվում, եթե մուտքի համար հայտով ներկայացված ժամանակահատվածում առկա են կազմակերպության կառավարման մարմիններից որևէ մեկի կողմից իրավական ակտով նախատեսված սահմանափակումներ:
  58. Ազգային պարկի արգելոցային գոտիների տարածք ֆիզիկական և իրավաբանական անձանց մուտք գործելու համար տպագրում է տարբերակված անցագրեր:
  59. Մուտքն արգելոցային գոտու տարածք թույլատրվում է միայն կազմակերպության համապատասխան աշխատողի ուղեկցությամբ:
  60. Արգելոցային գոտու տարածք մուտք գործողները սահմանված կարգով գրանցվում են արգելոցային գոտու մուտքի գրանցամատյանում: Գրանցամատյանի վարումն իրականացնում է կազմակերպությունը:
  61. Ազգային պարկի տարածքներ մուտքի կանոնակարգերը հաստատում է խորհուրդը:
  62. Հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքը տրամադրվում է կազմակերպության կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մրցությանին հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրերը կնքվում են կազմակերպության հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
  63. Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված տարածքների հետ կապված փոխհարաբերությունները կարգավորվում են կազմակերպության և համայնքի միջև կնքված պայմանագրով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
  64. Զբոսաշրջային գործունեություն իրականացնելու համար, զբոսաշրջային կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախապես պայմանագիր են կնքում կազմակերպության հետ:
  65. Կողմնակի անտառօգտագործման նպատակով ազգային պարկի տնտեսական գոտու տարածքները կարող են վարձակալության իրավունքով տրամադրվել մինչև հինգ տարի ժամկետով՝ հիմք ընդունելով պարկի կառավարման պլանի անտառգույքագրման և կենսաբանական պաշարների գնահատման տվյալները: Մեղվապահության նպատակով տարածքները կարող են վարձակալության իրավունքով տրամադրվել մինչև 25 տարի ժամկետով:
  66. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և Հայաստանի Հանրապետության արժույթով և (կամ) արտարժույթով գանձապետական հաշվարկային հաշիվներ:

## **VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

67. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը և խորհուրդը:
68. Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

## **VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

69. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով:
70. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: